

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**20 հոկտեմբերի 2009 թվականի թիվ 300-Ն**

**ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՀԱՏՈՒԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆՈՐՄԱՏԻՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բանկերի և ֆանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 33-րդ հոդվածի 6-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի համար սահմանել արտարժույթային դիրքի հատուկ տնտեսական նորմատիվ (այսուհետ՝ Նորմատիվ) վեց ամիս տևողությամբ:

2. Սահմանել, որ

1) Նորմատիվը բաղկացած է երկու տարրերից.

ա. յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցություն,

բ. բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցություն:

2) Նորմատիվի առավելագույն չափը սահմանվում է.

ա. յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև՝ 7 տոկոս,

բ. բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև՝ 10 տոկոս:

3) Նորմատիվը հաշվարկվում է օրական կտրվածքով և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով:

4) Նորմատիվի հաշվարկման նպատակով արտարժույթային դիրքը բանկի արտարժույթով, ինչպես նաև արտարժույթային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների (նաև հետհաշվեկշռային) միջև եղած տարբերությունն է: Դրամական ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժույթային ռիսկ, երբ դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարների մեծությունները հաշվարկվում են արտարժույթի և (կամ) արժույթային զամբյուղի՝ դրամի նկատմամբ փոխարժեքի միջոցով և, հետևաբար, կարող են տատանվել վերջինիս փոփոխությամբ պայմանավորված: Ընդ

որում, սույն որոշման իմաստով արտարժույթային ակտիվ կամ պարտավորություն են համարվում նաև թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորները, ինչպես նաև թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները, մետաղական հաշիվները:

- 5) Բանկն ունի արտարժույթային երկար դիրք, երբ բանկի արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով պարտավորությունների հաշիվների մնացորդներին:
- 6) Այն դեպքում, երբ ակտիվը կամ պարտավորությունը կցված է որևէ արժույթային զամբյուղի (բացառությամբ ՄԴՌ-ի), տվյալ զամբյուղի մեջ մտնող արտարժույթները մասնակցում են համապատասխան արտարժույթային դիրքերի հաշվարկին տվյալ զամբյուղի կառուցվածքում իրենց տեսակարար կշռին համապատասխան:
- 7) Արտարժույթային դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով առանց դրանց գծով ածանցյալ գործիքների (սվովի, ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն):

3. Նորմատիվը գործողության մեջ դնել 2009 թվականի հոկտեմբերի 26-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և գործում է մինչև 2010 թվականի ապրիլի 26-ը՝ ներառյալ:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ**

**Արթուր Զավադյան**

2009 թ. հոկտեմբերի 20  
ք. Երևան